



*Համարը* ՀՕ-120  
*Տիպը* Օրենք  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2000.12.30/33(131)  
*Ընդունող մարմինը* ՀՀ Ազգային ժողով  
*Ստորագրող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 30.12.2000

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 06.12.2000  
*Ստորագրման ամսաթիվը* 27.12.2000  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**Գապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ 1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԲԵԶԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՈՆԱԳԱՂԹՎԱԾ ԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 6-ին

**1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԲԵԶԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՈՆԱԳԱՂԹՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքը սահմանում է 1988-1992 թվականներին Աղբյուրի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավունքների իրականացման և օրինական շահերի պաշտպանության իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքները:

**Հոդված 1. Օրենքի գործողության շրջանակը**

Սույն օրենքի գործողությունը տարածվում է 1988-1992 թվականներին Աղբյուրի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց վրա:

**Հոդված 2. Բնակարանային ապահովության իրավունքը**

Բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 3. Զբաղեցրած բնակելի տարածքների նկատմամբ վարձակալ ճանաչելը**

Համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքներում երեք տարուց ավելի բնակվող՝ բռնագաղթված և

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք սահմանված կարգով ճանաչվում են վարձակալ իրենց զբաղեցրած տարածքների նկատմամբ, եթե այլ անձինք դրանց նկատմամբ չունեն վարձակալության և այլ իրավունքներ:

**Հոդված 4. Հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը**

Պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են դրանցում երեք տարուց ավելի բնակվող՝ բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց:

Սեփականաշնորհման կարգը և սեփականաշնորհման ենթակա հանրակացարանների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 5. Ժամանակավոր կացարաններում բնակվողներին տրվող արտոնությունները**

Ժամանակավոր կացարաններում (հյուրանոցներ, հանրակացարաններ, հանգստյան տներ, պանսիոնատներ, առողջարաններ և այլն) բնակվող՝ բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք ազատվում են բնակության համար սահմանված վարձը վճարելուց, բացառությամբ էլեկտրաէներգիայի և կոմունալ ծախսերի: Նրանց բնակվելու հետևանքով ժամանակավոր կացարանների կրած հաշվեկշռային վնասը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 6. Ադրբեջանի Հանրապետությունում թողած գույքի արժեքի փոխհատուցումը**

Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց Ադրբեջանի Հանրապետությունում թողած գույքի դիմաց փոխհատուցումների հարցը լուծելու դեպքում փոխհատուցվում է նաև բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց գույքի արժեքը:

**Հոդված 7. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**

**Ռ. Քոչարյան**

Երևան  
27 դեկտեմբերի 2000 թ.  
ՀՕ-120